Պարույր Սևակ

Դռան զանգի առաջ

Ես կոճակն եմ սեղմում.
-«Բո՛րբ»,- զնգում է զանգը,
Իսկ սենյակիդ ներսում արձագանքում՝ «բոսո՛ր»:
Սպասում եմ: Մի պահ:
Մի պա՞հ: Թե՞ ողջ մի կյանք,
Որ նման չէ, ավա՛ղ, հոսող ջրի կյանքին:
Սպասում եմ և՝ «մո՛ւթ»-
Ձայնը ետ է դառնում
Եվ չակերտի նման ինձ իր մեջ է առնում:
Դու չե՞ս վերադարձել:
Սուտ է ուրեմն, այո՞,
Թե կա մի վեցերորդ ինչ-որ զգայարան:
Սուտ է ուրեմն, այո՞, մանկությունից ծանոթ
«Սիրտս վկայում է» այն խոսքը, որ գուցե
Մարդկայինն է բոլոր խոսքերի մեջ մարդկանց...
Ու կոճակն եմ սեղմում՝ կոկորդի՛ պես,
Եվ այդ խեղճ կոկորդը խռխռում է խռպոտ:
«Գո՛րշ»,- սողում է ձայնը՝ հորանջի՛ պես՝ դանդա՛ղ:
Սպասում եմ: Մի պա՞հ: Թե՞ բովանդակ մի կյանք,
Որ խաչվում է քո տան սանդուղքների գլխին,
Խաչվում՝ պաշտամունքի չարժանացած:

Սպասում եմ և՝ «սև՜»,
Ձայնը գույնի փոխված՝
Կրկին ետ է դառնում
Եվ ինձ առնում
Իր սև շրջագծում մահազդային...
Դու տա՜ նը չես: Պա՛րզ է: Դու չե՜ս վերադարձել.
Որբ ես թողել և՛ ինձ,
Ե՛վ մի ամբողջ քաղաք,
Եվ հերքել ես մի բան, որ հաստատել է պետք.
Ա՛յն, որ կա վեցերո՜րդ զգայարան,
Եվ որ մարդկանց «սիրտը վկայում է» իրո՛ք:
Ու կոճակն եմ սեղմում.
«Սե՜ր»,- ճչում է զանգը,
Իսկ սենյակիդ ներսում արձագանքում՝ «կարո՜տ»...
Սպասե՞լ եմ: Որքա՞ն...
...Ու երբ վերջին անգամ
Բթամատս նորից կոճակին եմ դնում՝
«Բո՜րբ»,- հնչում է անվերջ, ողողանջում է կրկին,
Եվ այդ «բորբ»-ի հուժկու արձագանքը («բոսո՜ր»)
Արդեն լուսաբացի կիսաքնում
«Բարի լույս» է հնչում բոլո՜ր կանանց համար,
Որոնց ես չեմ սիրում, որովհետև
Քեզ եմ սիրում նույնիսկ ա՛յն ժամանակ,
Երբ որ իմ դեմ դուռդ բաց չի լինում:

20.X.1962թ.
Երևան